

Պ. ՀԱԹԻ ԲՍԵՆԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(Մարտ - Հուլիս. 1901)

Հարցադրութեան արժանի է Ուշինսկու կեանքի և գործունէութեան նկարագիրը։ Ռուսաց մանկավարժական գրականութեան այս հսկայ ներկայացողիչը թէ իւր կենդանութեան ժամանակ և թէ մահաց լեռով շատ հալածանքների է ենթարկուել։ Կարգալով այս արտաքուց կարգի անձ աւորութեան կենսագրութիւնը, մարդ չէ իմանում, թէ ինչի վերաջաւելի զարմանալ՝ սորա հակառակորդների լամառ շարամտութեան, թէ իրան Ուշինսկու անընկճելի բնաւորութեան ու նորա քարոզած դաշտիւրների մշտական թաւաթեան վերաբերեալ կենդանի մարդուն հալածելը արնքան տղեղ չէ թւում մեղ, որովհետեւ մենք գիտենք, որ առօրեայ մասը երեւոյթները իշխում են հակառակորդի փոքրողի բնաւորութեան վերայ, բայց երբ հալածանքը շարունակուում է մահաց լեռով, դա արդէն վրդովեցուցչւ մը բան է դառնում։ Ամենքը գիտենք, որ մինչև Ուշինսկու հրապարակ գալը ռուսաց մանկավարժական գրականութիւնը ողորմելի վիճակի մ ջ էր, որ դա անգամ դուրսէն չունէր Ուշինսկին ստեղծեց այդ դրականութիւնը և ստեղծեց հալածանքների ու թշնամանանքների հարուածները տակ... Վերջապէս մահու հրեշտակը օգնութեան հասած մեծ մանկավարժի հակառակորդներին։ Ուշինսկին մեռաւ։ Բայց նոր ս ցանած սերմերը չմեռան, նորա քարոզած մանկավարժական սկզբունքները զարմանալի արագութեամբ մարմնացան և ընդհանրացան, նորա լորինած դասագրքերը բացառիկ գործածութիւն ունայան, Родное слово-ն միջին թուով տարեկան 4 անգամ սկսեց տպագրուիլ և ամեն անգամ հարիւր հազար օրինակ։ Սա մի չտեսնուած երեւոյթ էր, մի անսովորական լաղթութիւն։ Բայց ուր կայ լաղթութիւն, արնտեղ կան և նախանձորդներ։ Ուշինսկու դասագրքերի բացառիկ գերիշխանութիւնը պէտք է նոր հակառակորդներ ստեղծէր դոցա դէմ։ Սկզբում այդ հակառակորդները գործում էին պատշաճի և օրինաւորութեան սահմաններում... Բայց երբ համոզուեցան, որ ազատ մրցութեամբ չարտի կարողանան հրապարակից հանել իրանց աննպատ դասագրքերը, դիմեցին կտրուկ միջոցներ։ Կրահալուց որ Ուշինսկու դասագրքերը չգործածուին այլ եւ, Պէտք էր ենթադրել, որ այդ պաշտօնական կարգադրութիւնը վերջնական հարուածը կտայ պատկառելի մանկավարժի գրական աշխատութիւններին։ Բայց ոչ, Ուշինսկու գրքերը գործածութիւնից չընկան։ Թէև հրապարակը լցուեցաւ նորանոր դասագրքերով, մինը միւսից փարթամ, մինը միւսից չքեղ տպագրուած, սա-

կալն Ուշինսկու գրքերը շարունակում էին տարածւել ու տարածուել. նոքա ալիպիսի հիմունքների վերայ էին դրուած, որոնք արհեստական կերպով չպիտի լաղթահարուէին. Եւ չլաղթահարուեցան: Ժամանակները փոխուեցան, կրքերը դադարեցան, նախանձորդները տեղի տուին, իսկ ներկայ նախարարութիւնը բացարձակ խոստովանեց ալդ գրքերի արժէքը և կապանքից արձակելով, թուլատրեց աղատ գործադրել որպէս լուսագոյն դասագիրք սկզբնական դասաւանդութեան համար:

Իմ Վարդենի լեզուի աւաջին տարին կազմուած է Ուշինսկու ա. տարուայ հետևողութեամբ: Մտերձ քննադատւ. Հաթը իմ գրքի ուժեղ գործածութեան դէմ խօսելու ժամանակ ոչ թէ իլալալսկու պատմութեան օրինակը պիտի աւաջ բերէր, որի հետ ոչինչ առնչութիւն չունի իմ գիրքը, ալ պիտի վեր առնէր Ուշինսկու օրինակը, որ մենք վերև լիշտակեցինք: Բայց ալդ անելու համար հարկաւոր էր մի փոքր իւր-իւրեւեռ, մի քիչ էլ Բրեհուէն:

Ալդ իրաւախոհութեան և բարեմտութեան բացակայութիւնը ցոյց տալու համար ես կը բերեմ մի երկրորդ օրինակ: Պ. Հաթը քննում է իմ գրքիս 26 դ. տիպը, միւշդեւ ալն ժամին, երբ նա գրում էր իւր քննադատութիւնը, կալն դորա 27-դ և 28-դ տպագրութիւնները, որոնք շատ կամ սակաւ տարբերում էին նախընթացից: Եւ չեմ պնդում, թէ այս նախադասքը կարող էր փոխել քննադատիս հոգեկան տրամադրութիւնը, որովհետեւ բացարձակ տեսնում եմ, որ նորա եղբակացութիւնները հետեանք չեն քննադատութեան: Այսուամենայնիւ գոնէ ձեականապէս իրաւախոհ լինելու համար պէտք էր վերցնել քննադատող գրքի վերջին տիպը:

Բայց եթէ Պ. քննադատս իմ վերաբերութեամբ հաւատարիմ է մնացել իւր նախագծեալ մտադրութիւններին, ուրիշների վերաբերութեամբ գոնէ պէտք է իրաւախոհ լինէր. կամենալով վալր գլիւ իմ գրքերիս արժէքը, նա մի ենոյն ժամանակ ոչնչացնում է բոլոր միւս դասագրքերը, որոնք դրութիւն ունին հրապարակի վերայ. «այ. Տէր Ղևոնդեանի գիրքը նորա համար է ալդալի տարածուած, որովհետեւ ուրիշ չկալ», — ալպէս է հաւատացնում պ. Հաթը: Այս պատճառաբանութիւնը ոչ ճշմարիտ է, ոչ արդաւացի. իմ Վարդենի լեզուի աւաջին մասը լոյս է տեսել սրանից 30 տարի առաջ, 1871 թ. Հոկտեմբերին *): Սկզբումը արդարեւ նա մենակ էր հրապարակի վերայ, բայց հետզհետէ մեր բոլոր լալտին մանկալալթները հրապարակ իջան իրանց դասագրքերով, որպիսիք են Սեդրակ Մանգինեան, Բահաթրեան, Աղալեան և ուրիշները: Հետեւեալ մեր դասագիրքը ոչ թէ մրցակիցներ չէ ունեցել:

*) Հետևարար Վտերճի բարեմադրութիւնները արուած են իմ գրքիւ երեսնամալ յորելեանին:

ալլ, ընդհակառակն, ունեցել է պատկառելի հակառակորդներ, որոնցից մի քանիսը մինչև այսօր էլ նորան հաւասար գործածութիւն ունին։

Այստեղ ես կարող էի վերջացնել իմ ասելիքս պէթիքնադատութեան վերաբերութեամբ, որովհետեւ նորա միւս ղիտողութիւնները առանձին նշանակութիւն չունին։ Բայց կարեւոր եմ համարում մի քանի բացատրութիւններ ևս առաջ բերել։

Եթէ Հալոց լեզուի ուսուցիչը ամբողջի պայմաններին մէջ է, որ կարող է չորս ամիս շարունակ կանգ առնել Այբբենական մասի վերալ, ինչպէս ենթադրում է պ. Հաթը, ապա նա պարտաւոր է ղեկավարել մանուկների կրթական գործը իւր բոլոր մանրամասնութիւններով. նա պարտաւոր է ծանօթացնել նոցա իրանց շրջապատող աշխարհի հետ, զարգացնել նոցա մէջ ղիտելու և խօսելու ընդունակութիւնը, սնունդ տալ նոցա մանկական երեակալութեանը, պատմել և պատմել տալ փոքրիկ առակներ և հէքիաթներ, և սորա հետ զուգընթաց ընտելացնել կարդալուն և սովորացնել գրելը։ Իսկ եթէ ուսուցիչը ամբողջի պայմաններին մէջ չէ, եթէ նորա աշակերտները մի ուրիշ լեզուով կարդում են արդէն, եթէ կոչուած է միայն հալերէն սովորեցնելու, ապա մի ամիսը բաւական է գրեթէ ալրենական մասն անցնելու համար։

Ոչ մի հեղինակ իրան անսխալական չէ կարող համարել. նմանապէս ոչ մի դասադիրք չէ կարող բաւարարութիւն տալ բոլոր ուսումնարանների և ուսուցանողների պահանջներին։ Դասատուն մեքենալ չէ, որին կարելի լինի այսպէս կամ այնպէս լարել. նա կենդանի արարած է, ունի իւր ինքնուրոյն ութիւնը, իւր անհատական հայեցակէտը։ Դասադիրքը մի ուղեցոյց է միայն, որ առաջարկում է որոշ եղանակ, որոշ նիւթ և որոշ յրջանակ. մնացածը կախուած է ուսուցանողի անհատականութիւնից։ Հետեւապէս մեր առաջարկած առակները ուսուցչի համար պարտաւորեցուցիչ չեն, էթէ նա ինչպէս էր պատմելու. նմանապէս օրինակելի բառերը վերլուծութեան համար նա կարող է ընտրել իւր ուղածին պէս, որովհետեւ ինչ որ մէկի համար հեշտ է և լարմար, միւսի համար կարող է դժուար լինել և անլարմար. նոյնը պիտի ասել տեղի ու ժամանակի վերաբերութեամբ։ Սոքա տարրական ճշմարտութիւններ են, որ ամեն դասատուի ծանօթ պիտի լինին... Ամենահեղինակաւոր մանկավարժներն անգամ չեն կաշկանդում ուսուցչի ազատութիւնը։

Մենք աշխատել ենք, որքան կարելի է, համառօտել «Մարբենի լեզուի» արբենական մասը. մեր նշանագրերն աշխարհն շատ են, որ եթէ ամեն մի տառի վերալ երկար կանգ առնէինք, զրքի կէսը պիտի ալրուրէին նուրիէինք։ Այբբենական մասի ալ համառօտութիւնը մեր զրքի արժանաւոր

րութիւններից մինն է, թէև դա գուր չէ դալիս մեր քննադատին:

«Մայրենի լեզուի» արքենական մասից մանուկներն անցնում են ընթերցարանին քալլ ԿՈՔԱՅՎ, բոլորովին անդգալի կերպով. այ. Հաթի ակնարկած զայտօնմները չկան ամենեկին: Գրքիս ընթերցողական մասը բաժանուած է երկու շրջանի: Ա. շրջանը բաղկացած է 16 մանրաշրջանից. Ամեն մի մանրաշրջան տալիս է մանուկներին նախ որոշ առարկաների անուններ. լետոյ այդ առարկաների անունները խառն դասակարգած առաջարկում են Քրտուր ԴՆԻՍԻՆԻՆԻԻ համար. արնուհետև գալիս են արտօնածներ, առածներ, հանելուկներ... Զրուցատրութեան համար մենք տալիս ենք մի նկարագրական փոքրիկ լողուած, անգիր սովորելու համար մի մանկական ոտտնադուր, արձակ կարգալու համար մի պատմողական դրութիւն: Սորանով մանրաշրջանը վերջանում է: Մեր քննադատը սարսափում է այս նիւթերի շատութիւնից: Այեաք է գիտեալ, սակայն, որ ընթերցարանիս մէջ առաջ բերած բոլոր առարկաները իրադնութեան նիւթ չգիտի լինին. բաւական է, եթէ նրանցից մէկի կամ միւսի վերալ ուսուցիչը փոքր ինչ կանգ առնի... Ներկայումս, երբ մեր զաւակները քիչ է մնում հացի անունն էլ մոռանան, այդ վարժութիւնները ոչ միայն կարևոր են, այլ և անհրաժեշտ:

Մարդու առաքինութիւններից մինն էլ այն է, որ նա ձգտում է չարիքի մէջ անգամ բարիք որոնել. իսկ այն մարդը, որ մընչև անգամ բարիքի մէջ բարիք չէ տեսնում, ամեն նստողորմկի արարածն է իւր տեսակի մէջ: Մի մաշուած ճշմարտութիւն չալանած կլինէինք, եթէ ասէինք, թէ հրապարակախօսը պէտք է ազատ լինի մանր հաշիւներից. թէ նա պէտք է պատկառանք ունենալ դէպի իւր պաշտօնի վսեմութիւնը. բայց և մեղանչած չէինք լինիլ իրականութեան դէմ, եթէ պնդէինք, որ մեր հրապարակախօսներից շատերը այս տարրական ճշմարտութեանն անգամ հաւատարիմ մնալ չեն կարողանում: Երբ հրապարակախօսը քննադատում է մի հասարակական երևոյթ և իւր քննադատութեան մէջ ծալրալեզութեան է հասնում, ոչոք նրան անպալման դատապարտել չի կարող. բայց երբ դոյն այդ հրապարակախօսը դրկում է իւր դիմացինիս պաշտպանութեւ իրաւունքից, նա արդէն փոքրօգութիւն է գործում:

Աւերձ ի հօկտ. համարում դետեղած էր մի քննադատութիւն իմ «Մայրենի լեզուի» ա. տարուայ վերաբերութեամբ: Թողուածի տակը դրած էր «Հաթի» ստորագրութիւնը: Ոչ քննադատութեան տեք, ոչ նորակարգութիւնները ինձ չէին կարող մշտացնել. այ. Հաթի ինձ համար մի մարդ էր, որ իւր սլաքները արձակում էր թիւ լիակից: Այսու ամենալին կս

կարեւոր համարեցի մի քանի գիտողութիւններ անել տի-
քնադատութեան առիթով և իմ պատասխանս ուղարկեցի
«Մուրճին» իմ գիտողութիւններս, որ անփութիս առաջ բերի
վերեր, գրուած են ամենայն սառնարիւնութեամբ. ոչ մէկ
վերաւորական խօսք, ոչ մէկ անպատշաճ դարձուած չկայ
նրանց մէջ. ևս համոզուած էի, որ Մուրճը կըտպագրի իմ
պատասխանս, եթէ պ. Հաթը նոյն խել Լ. Սարգսեանը կողմ
լինի. Բայց ես սխալուեցայ. «Մուրճ»-ը չընդունեց իմ լօզուածը,
իմ գիտողութիւնները «Մուրճ»-ին ուղարկելիս՝ ես ոչ միայն
յինուած էի իմ օրէնքի իրաւունքներէս, այլ և հաւատում էի
«Մուրճ»-ի լիակշիւ բարոյական պարտաճանաչութեանը. Պ.
Սարգսեանի վարմունքը փարատեց իմ սխալ կարծիքը.

Սակայն հետաքրքիր է պարզել, թէ ինչ պատճառ ու-
նէր պ. Սարգսեանը դժգոհ լինել իմ գրութիւնից կամ ինչու
նա չէ կարողանում հաշտ աչքով նայել մի դասագրքի, որ 30
տարի շարունակ ծառայել է հայ մանուկներին թէ այստեղ,
Ռուսաստանում, և թէ Տաճկաստանում, որ 500,000 փուն է
մտել, ուրեմն 500,000 մարդու սովորցրել է իւր մայրենական
լեզուն, որոնցից 300,000-ին ձրի (Տաճկաստանում). Գուցէ
ես նրանով եմ մեղաւոր պ. Սարգսեանի առաջ, որ գործում
եմ լռելեայն, առանց աղաղակ բարձրացնելու, առանց հրա-
պարակական հատուցումներ պահանջելու.

Ոչ, այստեղ դեր չեն խաղում ոչ իմ գրքերի պակասու-
թիւնները, ոչ իմ գործելու եղանակը. միակ և հասկանալի
պատճառն արն է, որ պ. Լ. Սարգսեանը մի դասագիրք է լօ-
րինել, «Մայրենի խօսք», որ իւր բովանդակութեամբ միան-
գամից ցլիտի փոխարինէր իմ գրքերի եթէ ոչ Ա. Գոնէ Բ. Գ.
և Դ. տարիներին. Սակայն հայ հասարակութիւնը, երբի բթա-
ցած իմ գրքերի մեծասակար ազդեցութիւնից, անկարող է
գտնուել գնահատել պ. Սարգսեանի գրչի արգասիքը.

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՅ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻԻՆՆԵՐ

ՎԵՆ. Հալրապետի Դիւանի գրութեան հետ ստացանք
էջմիածնատիպ օրացոյց նոր տարուայ շնորհաւորութեան առ-
թիւ.

Մ. Աբեղեան. Հայ ժողովրդական առասպելները Վաղարշ.
1901.

Շիրվանզադէ. Նամուս Բ. տպ. Թիֆլիս 1901.

Բենիկ վ. Քարոզչական թոթովանքներ. Ա. Թիֆլ. 1901.

Վ. Փափաղեան, Վտակ. Թիֆլ. 1901.

Տմբլաչի Խաչան. Զուռնա տմբլա. Բաղ. 1900.

Ռ. Պետրեան. Դաստիարակի մը խօսքերը. Վեն. 1901.